«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ
ՀՐԱՄԱՆ

«22» սեպտեմբերի 2025թ. **N 11-Լ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետի 14-րդ ենթակետը և Գիտական գծով պրոռեկտոր Տ. Պետրոսյանի 19.09.2025թ.-ի զեկուցագիրը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում հայտարարել պրոֆեսորադասախոսական անձնակազմի դրամաշնորհային գիտական նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ կամ Նախագծեր) մրցույթ:
2. Նախագծերի մրցույթի համար սահմանել հետևյալ պայմանները՝
   1) Նախագծերի պատրաստման ժամկետ՝ ս.թ. սեպտեմբերի 22-ից մինչև նոյեմբերի 19-ը,
   2) Նախագծերի գիտական հայտերի հանձնման վերջնաժամկետ՝ ս.թ. նոյեմբերի 19-ը ժամը 16^{00} ներառյալ,
   3) Նախագծերի հաշվառման և գիտական փորձաքննության համար հայտերը թղթային տարբերակով ներկայացնել Գիտամեթոդական բաժին և էլեկտրոնային տարբերակով ուղարկել eranuhi.simonyan@sportedu.am էլեկտրոնային հասցեին,
   4) Նախագծերի իրականացման ժամկետ՝ 2 (երկու) տարի 2026թ. հունվարի 5-ից մինչև 2027թ.-ի դեկտեմբերի 30-ը,
   5) Նախագծի ընդհանուր բյուջե՝ 4,000,000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, որից առավելագույն 80%-ը աշխատավարձ, իսկ 20%-ը՝ Նախագծի շրջանակներում այլ ծախսեր,

6) Նախագծերի համար հայտարարված մրցույթի արդյունքների ամփոփում՝ ս.թ. դեկտեմբերի 1-ից 10-ը:
7) Նախագծերը կազմելիս առաջնորդվել Գիտական խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 02-ի թիվ 11-Լ որոշմամբ հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՊՐՈՖԵՍՈՐԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ» նախատեսված փաստաթղթերի ձևաչափով:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԵԿՏՈՐ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

X _____